



**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍ – 2024

Հաշվեկտրային «Հերիթեյջ» հիմնադրամի կողմից հրապարակված զեկույցի
(2024թ.) հիման վրա



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	1
1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	3
2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ	7
3. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	10
4. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ	13
ԱՄՓՈՓՈՒՄ	17

ՆԱԽԱԲԱՆ

Ազատության (այդ թվում՝ նաև տնտեսական) ապահովումն աշխարհի բոլոր երկրներում հասարակական զարգացման ներկայիս փուլում հանդիսանում է իշխանության առաջնային նպատակներից մեկը: Այս ասպարեզում երկրների առաջընթացը չափելու և գնահատելու, ինչպես նաև միջժամանակային ու միջերկրային համեմատություններ կատարելու նպատակով հատկապես կարևորվում է առավելագույնս ճշգրիտ և համընդհանուր ընդունված մեթոդաբանությամբ հաշվարկների իրականացումը: Այս խնդիրներով շատ երկրներում զբաղվում են ազգային տարբեր մասնագիտացված կառույցներ ու գիտակրթական հաստատություններ, սակայն կան մի քանի միջազգային հեղինակավոր կազմակերպություններ, որոնց՝ այս ոլորտի վերաբերյալ կատարած հետազոտությունների արդյունքները համընդհանուր ճանաչված և ընդունելի են: Դրանցից ամենահայտնին թերևս «Հերիթեյջ» հիմնադրամն է (The Heritage Foundation), որը 1995 թվականից ի վեր հրապարակում է «Տնտեսական ազատության ինդեքս» ամենամյա զեկույցների շարքը: Տարեկան զեկույցում տվյալ տարվա համար գնահատվում է տարբեր երկրների տնտեսական ազատությունը՝ միաժամանակ հնարավորություն ընձեռելով կատարելու միջժամանակային և միջերկրային համեմատություններ: Օրերս հրապարակվել է այդ շարքի հոբելյանական 30-րդ ամենամյա զեկույցը՝ «Տնտեսական ազատության ինդեքս - 2024»¹ (այսուհետ՝ Զեկույց):

Զեկույցը պատրաստվել է աշխարհի 176 երկրների վերաբերյալ 2022թ. հուլիսի 1-ից 2023թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի տվյալների հիման վրա:

Զեկույցում նշվում է, որ 2023 թվականը ևս մեկ ողբերգական իրադարձություններով լի տարի էր: Այն ևս մեկ անգամ ապացուցեց, որ սխալ է ենթադրել, թե տնտեսական ազատության ապահովումն ինքնաբերաբար ապահովվող գործընթաց է: Զեկույցում կորոնավիրուսային համավարակի, ռուս-ուկրաինական ռազմական հակամարտության, Չինաստանի կոմունիստական կուսակցությունում տեղի ունեցող գործընթացների, պաղեստինախորայելական բախման, Եմենի հուֆինների գործողությունների կողքին որպես տնտեսական ազատության համար լուրջ սպառնալիք է ներկայացվում նաև ԱՄՆ դեմոկրատական վարչակազմի վարած քաղաքականությունը:

Որպես կարևոր եզրահանգում նշվում է, որ ներկայումս, առավել քան երբևէ, պետք է կարևորել այն հանգամանքը, որ երկրի շարունակական աճի և բարգավաճման պոտենցիալը մեծապես կախված է նրանից, թե այդ երկրի

¹ Զեկույցը հասանելի է հետևյալ հղումով՝

https://thf_media.s3.amazonaws.com/index/pdf/2024/2024_indexofeconomicfreedom.pdf

ինստիտուտներն ու տնտեսական համակարգը որքանով են նպաստում տնտեսական ազատության պահպանմանն ու խորացմանը:

Համաձայն Ձեկույցի՝ ինչպես և նախորդ տարի, 2024թ. տնտեսական ազատության համաշխարհային ինդեքսը դարձյալ նվազել է՝ 0.7 միավորով և կազմում է 58.6 միավոր, ինչը 2001-ից ի վեր արձանագրված ամենացածր արժեքն է: Այս տարվա զեկույցում նույնպես նշվում է, որ, չնայած համաշխարհային տնտեսական ազատության նկատելի անկմանը, տնտեսական ազատության բարելավման և բարեկեցության աճի միջև առկա բացահայտ դրական կապը շարունակում է պահպանվել:

Այս տարի ևս Հայաստանի տնտեսական ազատության ինդեքսը (այսուհետ՝ SUH) նախորդ տարվա համեմատ նվազել է 0.2 միավորով և կազմել 64.9 միավոր: Այս տարի ավելի է «գերազանցվել» անցյալ տարվա հակառեկորդը՝ Հայաստանի 2024թ. SUH-ն 2001 թվականից ի վեր ամենացածրն է:


Կարևորելով զեկույցների շարքի դերը՝ «Լույս» հիմնադրամը յուրաքանչյուր ամենամյա զեկույցի հրապարակումից հետո կատարում է դրա վերաբերյալ վերլուծություն²: Սույն հաշվետվության սկզբում նկարագրվել է տնտեսական ազատության ինդեքսը և դրա հաշվարկման մեթոդաբանությունը: Այնուհետև անդրադարձ է կատարված Ձեկույցի՝ աշխարհին վերաբերող առավել ուշագրավ տեղեկատվությանը: Հաջորդիվ ներկայացվել են Հայաստանի SUH-ն և դրա բաղադրիչները: Հաշվետվության հաջորդ մասը նվիրված է Հայաստանի և որոշ երկրների տարածաշրջանային համադրումներին: Վերջում հակիրճ ներկայացվել են վերլուծության կարևոր արդյունքներն ու եզրահանգումները:

² 2019-ից ի վեր կատարված բոլոր վերլուծությունները հասանելի են «Լույս» հիմնադրամի պաշտոնական կայքում՝ <https://www.luys.am/...drangeseach=0>:

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Տնտեսական ազատության ինդեքսը ագրեգացված ցուցանիշ է և հաշվարկվում է որպես 4 խմբերում (օրենքի գերակայություն, պետական հատվածի կշիռ, կարգավորումների արդյունավետություն և շուկայի բացություն) խմբավորված 12 ենթաինդեքսների միջին թվաբանական (Գծապատկեր 1):

Գծապատկեր 1. Տնտեսական ազատության ինդեքսի կառուցվածքը



Վերոհիշյալ 12 ենթաինդեքսները համապատասխան վիճակագրական ցուցանիշների ագրեգացման հիման վրա նախապես, գնահատվում և ստանդարտացվում են 0-100 միջակայքում: Այնուհետև հաշվարկվում է ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԻ (SUH)-ն՝ որպես այդ ենթաինդեքսների միջին թվաբանական: Կախված ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԻ-ի արժեքից երկիրը դասակարգվում է որպես՝

- 1) տնտեսապես **«ազադ»**, եթե ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԻ-ին կազմում է 80 և ավելի միավոր,
- 2) տնտեսապես **«հիմնականում ազադ»**, եթե ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԻ-ին 70-79.9 միջակայքում է,
- 3) տնտեսապես **«չափավոր ազադ»**, եթե ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԻ-ին 60-69.9 միջակայքում է,
- 4) տնտեսապես **«հիմնականում ոչ ազադ»**, եթե ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԻ-ին 50-59.9 միջակայքում է,
- 5) տնտեսապես **«ճնշված»**, եթե ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԻ-ին 50 միավորից պակաս է:

Ստորև ներկայացվում է ՏԱԻ-ի 12 ենթահինդեքսների հակիրճ նկարագրությունը:

ԽՈՒՄԲ 1 - ՕՐԵՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

1. Սեփականության իրավունքի պաշտպանություն ենթահինդեքսով «չափվում» է, թե որքանով է երկրի օրենսդրական դաշտը հնարավորություն ընձեռում ձեռք բերել, տիրապետել և տնօրինել մասնավոր սեփականություն, գործող օրենսդրությունը որքանով է երաշխավորում այդ իրավունքները, և իշխանությունը որքանով է ապահովում օրենսդրական դաշտի նորմալ գործողությունը: Այն հաշվարկվում է որպես հետևյալ երեք ենթագործոնների գնահատումով ստացվող արժեքների միջին թվաբանական՝

- մասնավոր (նյութական) սեփականության բռնագրավման ռիսկ,
- մտավոր սեփականության պաշտպանվածության մակարդակ,
- պայմանագրերի, սեփականության իրավունքի և օրենքների կիրառելիություն:

2. Արդարադատության արդյունավետություն ենթահինդեքսն օգտագործվում է քաղաքացիների իրավունքների երաշխավորվածության, ինչպես նաև հակաօրինական գործողություններից դրանց պաշտպանվածության մակարդակը գնահատելու համար և հաշվարկվում է որպես հետևյալ երեք ենթագործոնների գնահատումով ստացվող արժեքների միջին թվաբանական՝

- դատական համակարգի անկախություն,
- դատական գործընթացի որակ,
- հանրային ծառայությունների որակի և քաղաքացիական ծառայության անկախության վերաբերյալ ընկալումներ:

3. Կոռուպցիայի բացակայություն ենթահինդեքսը հետևյալ երեք ենթագործոնների գնահատումով ստացվող արժեքների միջին թվաբանականն է՝

- կոռուպցիայի ընկալման մակարդակ,
- կաշառակերության ռիսկ,
- կոռուպցիայի (ներառյալ էլիտաների և այլ խմբերի կողմից պետության «զավթումը») վերահսկում:

ԽՈՒՄԲ 2 - ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԿՇԻՌ

4. Հարկային բեռ ենթահինդեքսն արտացոլում է հարկային բեռի պատճառով կառավարության կողմից տնտեսական ակտիվության սահմանափակման աստիճանը: Այն հետևյալ երեք ենթագործոնների գնահատումով ստացվող արժեքների միջին թվաբանականն է՝

- եկամտային հարկի դրույքաչափի վերին սահման.
- շահութահարկի դրույքաչափի վերին սահման.
- հարկեր/ՀՆԱ հարաբերակցություն:

5. Պետական ծախսեր ենթաինդեքսով գնահատվում է, թե պետական ծախսերի պատճառով որքանո՞վ է սահմանափակվում տնտեսական ազատությունը: Համարվում է, որ պետական ծախսերի բարձր մակարդակը մասնավոր հատվածի տնտեսական ակտիվության նվազման տեսանկյունից ռիսկեր է պարունակում: Ենթաինդեքսը հանդիսանում է «պետական ծախսեր/ՀՆԱ» ցուցանիշի վերջին երեք տարիների արժեքների միջին մեծության ոչ գծային ստանդարտացման արդյունք:

6. Հարկաբյուջետային կայունություն ենթաինդեքսը հետևյալ ենթագործոնների գնահատումով ստացվող արժեքների կշռված միջինն է՝

- պետական բյուջեի պակասուրդ/ՀՆԱ հարաբերակցության վերջին երեք տարիների միջին արժեք (ենթաինդեքսի գնահատականում այս ենթագործոնն ունի 80% կշիռ),
- պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցություն (ենթաինդեքսի գնահատականում այս ենթագործոնն ունի 20% կշիռ):

ԽՈՒՄԲ 3 - ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ

7. Գործարարության ազատություն ենթաինդեքսը ցույց է տալիս, թե երկրի իրավակարգավորումների և ենթակառուցվածքների համակարգերը որքանո՞վ են նպաստում ձեռնարկատիրական արդյունավետ գործունեություն ծավալելուն և հաշվարկվում է հետևյալ չորս ցուցանիշների հիման վրա՝

- էլեկտրաէներգիայի հասանելիություն.
- գործարար միջավայրի ռիսկայնություն.
- իրավակարգավորումների որակ.
- փնտրեսական գործընթացներում կանանց ներգրավվածություն:

8. Աշխատանքի ազատություն ենթաինդեքսը հետևյալ ինը ենթագործոնների գնահատումով ստացվող արժեքների միջին թվաբանականն է՝

- նվազագույն աշխատավարձ.
- արհմիությունների իրավունքներ.
- ամենամյա վճարովի արձակուրդի հասանելիություն.
- հասարիքի կրճատման պատճառով աշխատանքից ազատման վերաբերյալ ծանուցման ժամկետ.

- հասարիքի կրճատման պատճառով աշխատանքից ազատման պարտադիր վճարի չափ.
- աշխատանքի արտադրողականություն.
- աշխատուժի մասնակցության գործակից.
- արտաժամյա աշխատանքի սահմանափակումներ.
- հասարիքի կրճատման պատճառով աշխատանքից ազատման իրավական կարգավորման առկայություն:

9. Դրամավարկային ազատություն ենթաինդեքսով բնութագրվում է դրամավարկային քաղաքականություն իրականացնող մարմինների ազատությունը գների կայունության ապահովման հարցում: Այն հիմնվում է հետևյալ երկու ենթագործոնների վրա՝

- գնաճի տեմպ (վերցվում է վերջին երեք տարիների կշռված միջինը).
- պետության կողմից գների արհեստական վերահսկման մեխանիզմի առկայություն:

ԽՈՒՄԲ 4 - ՇՈՒԿԱՅԻ ԲԱՑՈՒԹՅՈՒՆ

10. Առևտրի ազատություն ենթաինդեքսով գնահատվում են միջազգային շուկաներում ազատ առևտուր իրականացնելու գործում տնտեսական սուբյեկտների հնարավորությունները: Ենթաինդեքսի հաշվարկման համար օգտագործվող ցուցանիշներն են՝

- մաքսավորքի միջին կշռված դրույքաչափը.
- ոչ մաքսային խոչընդոտների որակական գնահատականը:

11. Ներդրումային ազատություն ենթաինդեքսով գնահատվում է ներդրումային կապիտալի շարժի վրա պետականորեն դրված սահմանափակումների մակարդակը: Ենթաինդեքսի արժեքը հաշվարկելիս առավելագույն 100 միավորից հանվում է յուրաքանչյուր սահմանափակման համար տրվող տուգանային միավորը (տուգանային միավորը կախված է տվյալ սահմանափակման «ուժեղությունից»):

12. Ֆինանսական ազատություն ենթաինդեքսն արտահայտում է բանկային գործունեության արդյունավետության և պետական վերահսկողությունից ու միջամտությունից անկախության աստիճանը: Դրա հաշվարկը հիմնված է հետևյալ ցուցանիշների վրա՝

- ֆինանսական ծառայությունների պետական կարգավորման աստիճան.

- բանկերի և այլ ֆինանսական ինստիտուտների գործունեության մեջ պետական միջամտության (ուղղակի կամ անուղղակի տնօրինմամբ) աստիճան,
- վարկերի տեղաբաշխման վրա կառավարության ազդեցություն,
- ֆինանսական և կապիտալի շուկաների զարգացածություն,
- միջազգային մրցակցության առումով բացություն:

Տվյալ տարվա ՏԱԻ-ի հաշվարկը կատարվում է այդ տարեսկզբից 18-ից 6 ամիս առաջվա տվյալների հիման վրա:

2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Ինչպես և նախորդ տարի, 2024թ. զեկույցում ևս դիտարկվել է 184 երկիր, սակայն դրանցից միայն 176-ի համար է հաշվարկվել ՏԱԻ, քանի որ 8 երկրների համար 12 ենթահնդեքսներից ոչ բոլորն է հնարավոր եղել հաշվարկել: **ՏԱԻ-ի համաշխարհային միջինը նախորդ տարվա համեմատ դարձյալ նվազել է՝ ինչպես և նախորդ տարի՝ 0.7 միավորով, և կազմել 58.6 միավոր, որը 2001 թվականից ի վեր արձանագրված նվազագույն մեծությունն է:** Դեռևս անցյալ տարվանից համաշխարհային տնտեսությունը **«չափավոր ազապ»-ից դարձել է «հիմնականում ոչ ազապ»:**

Զեկույցում նշվում է, որ 2023 թվականը, որպես ևս մեկ ողբերգական իրադարձություններով լի տարի, հավելյալ անգամ հաստատեց, որ անհիմն է հուսալը, որ մարդկային զարգացմամբ անխուսափելիորեն երաշխավորվում է տնտեսական ազատության ինքնին ապահովումը:

Զեկույցում նույն հարթության վրա, որպես տնտեսական ազատության համար լուրջ վտանգ են ներկայացվում և՛ այնպիսի գլոբալ մարտահրավերներ, ինչպիսիք են կորոնավիրուսային համավարակը, ռուս-ուկրաինական ռազմական հակամարտությունը, Չինաստանի կոմունիստական կուսակցությունում տեղի ունեցող գործընթացները, Իսրայելի և ՀԱՄԱՍ շարժման միջև ընթացող ռազմական գործողությունները, Կարմիր ծովում Եմենի հուֆիների հարձակումները, և՛ ԱՄՆ դեմոկրատական վարչակազմի վարած քաղաքականությունը:


Համաշխարհային մակարդակով տնտեսական ազատության հետընթացը զեկույցում բացատրվում է այն հանգամանքով, որ շատ երկրներում մի շարք օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով տնտեսական ազատության սկզբունքներից հրաժարումը հետագայում ոչ միայն խոչընդոտեց այնքան անհրաժեշտ արագ և ուժեղ տնտեսական վերականգնմանը, այլև վտանգեց

երկարաժամկետ տնտեսական կայունությունն ու զարգացումը: Որպես ասվածը հաստատող փաստարկ նշվում է, որ շատ երկրներ արդեն իսկ կուտակել են ահռելի մեծ պարտքեր, ինչը, բնականաբար, լուրջ խոչընդոտ է հանդիսանում այդ երկրներում տնտեսական լճացման հաղթահարման համար:

Վիճակագրական տվյալները հաստատում են, որ տնտեսապես ավելի ազատ երկրներում, որպես կանոն, առկա են տնտեսական գործունեություն իրականացնելու ավելի մեծ հնարավորություններ, ավելի բարձր կենսամակարդակ և կյանքի որակ, ինչպես նաև աղքատության ավելի ցածր մակարդակ: Ի հաստատումն այս դրույթի՝ այս տարվա Զեկույցում նույնպես (ինչպես և անցյալ տարի) նշվում է, որ, չնայած համաշխարհային տնտեսական ազատության նկատելի անկմանը, դրա բարելավման և բարեկեցության աճի միջև դրական կապը շարունակում է պահպանվել: Մասնավորապես, բնակչության կենսամակարդակն արտահայտող մեկ շնչի հաշվով եկամուտները տնտեսապես «ազատ» և «հիմնականում ազատ» երկրներում միջին հաշվով ավելի քան կրկնակի գերազանցում են մնացած երկրների և եռակի՝ տնտեսապես «ճնշված» երկրների ցուցանիշին:

Գծապատկեր 2-ից երևում է, որ ՏԱԻ-ի 2024թ. գնահատականներով տնտեսապես «ազատ» է համարվում ընդամենը 4 երկիր, «հիմնականում ազատ»՝ 22 երկիր: Եվս 55 երկիր համարվում է «չափավոր ազատ»: Մնացած 95 երկրները (կամ ՏԱԻ-ի հաշվարկներում ներառված 176 երկրների շուրջ 54%-ն) ունեն 60-ից ցածր միավոր: Այդ երկրներից 62-ը դասվում են «հիմնականում ոչ ազատ», 33-ը՝ «ճնշված» տնտեսությունների շարքին:


Գծապատկեր 2. Տնտեսական ազատության աստիճանն աշխարհում 2024 թվականին՝ ըստ «Հերիթեյջ» հիմնադրամի դասակարգման, երկիր



Համաշխարհային վարկանիշային աղյուսակը 83.5 միավորով այս տարի ևս գլխավորում է **Սինգապուրը**: Երկրորդ տեղում **Շվեյցարիան** է՝ 83.0 միավորով: Վերջինիս 0.4 միավորով է զիջում երրորդ հորիզոնականը զբաղեցնող **Իռլանդիան**: Տնտեսապես ազատ երկրներից վերջինը **Թայվանն** է, որի ՏԱԻ-ն նվազելով հասել է տնտեսապես **«ազափ»** երկրների խմբի միջակայքի ստորին շեմին: 2024թ. զեկույցում տնտեսապես **«ազափ»** երկրների ցանկը 2023-ի համեմատ չի փոխվել (իսկ 2022-ի զեկույցում դրանք յոթն էին): Վարկանիշային աղյուսակը եզրափակում են **Վենեսուելան** (28.1 միավոր), **Կուբան** (25.7 միավոր) և **Հյուսիսային Կորեան** (2.9 միավոր):

Գծապատկեր 3-ում ներկայացված են աշխարհի հինգ տարածաշրջաններում 2022-2024թթ. ՏԱԻ-ի միջին գնահատականները:

Գծապատկեր 3. ՏԱԻ-ի արժեքները ՀՀ-ում, աշխարհում և տարբեր տարածաշրջաններում, 2022-2024թթ.



Եվրոպայի տարածաշրջանն այս տարի ևս առաջատարն է՝ 67.2 միավորով: Ի դեպ, այս տարածաշրջանում ՏԱԻ-ի միջին արժեքը 2023-ի համեմատ նվազել է 1.0 միավորով: Հարկ է նշել, որ միջին ՏԱԻ-ն նվազել է չորս տարածաշրջաններում: Աճել է միայն «Մերձավոր Արևելք և Հյուսիսային Աֆրիկա» տարածաշրջանի ՏԱԻ-ն՝ 56.8-ից 57.4: Միայն «Եվրոպա» տարածաշրջանն է ՏԱԻ-ի միջին արժեքով համարվում տնտեսապես **«չափավոր ազափ»**: Մնացած բոլոր տարածաշրջանները **«հիմնականում ոչ ազափ»** են:


Հայաստանը 2024թ. ՏԱԻ-ի միավորով Եվրոպայի միջին գնահատականին զիջում է 2.3 միավորով: ՀՀ ՏԱԻ-ի գնահատականը 2024 թվականին ևս գերազանցում է համաշխարհային միջինին:

3. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի ՏԱԻ-ն 2024 թվականին դարձյալ նվազել է և կազմել 64.9 միավոր՝ նախորդ տարվա ցուցանիշից 0.2 միավորով պակաս: Այն 2001 թվականից ի վեր գրանցված ամենացածր ցուցանիշն է: Չնայած ՏԱԻ-ի նվազմանը, համաշխարհային վարկանիշային աղյուսակում Հայաստանն իր դիրքը նախորդ տարվա համեմատ բարելավել է 3 հորիզոնականով և աղյուսակում 47-րդն է (Գծապատկեր 4): Դա պայմանավորված է նրանով, որ նախորդ տարվա վարկանիշային աղյուսակում Հայաստանից ավելի բարձր հորիզոնականում գտնվող որոշ երկրներում 2024թ. ՏԱԻ-ի նվազումն ավելի մեծ է եղել: Արդեն երրորդ տարին անընդմեջ Հայաստանը գտնվում է տնտեսապես «չափավոր ազատ» երկրների խմբում: Հիշեցնենք, որ 2020 և 2021 թվականներին Հայաստանի ՏԱԻ-ն գերազանցում էր 70 միավորը և ընդգրկված էր տնտեսապես «հիմնականում ազատ» երկրների խմբում:

Ինչպես և 2023թ. զեկույցում, այս տարի ևս նշվում է, որ «Հայաստանում տնտեսական ազատության հիմքերը ամուր չեն պահպանվում անկախ դատական համակարգի կողմից, իսկ կոռուպցիան նվազեցնում է տնտեսական զարգացման հնարավորությունները»:

Գծապատկեր 4. ՏԱԻ-ն Հայաստանում և ՀՀ դիրքը՝ ըստ ՏԱԻ-ի, 2017-2024թթ.



Աղյուսակ 1-ում ներկայացված են Հայաստանի ՏԱԻ-ի ենթաինդեքսները 2023 և 2024 թվականներին:

Աղյուսակ 1. ՏԱԻ-ն և դրա ենթահիմքերը ՀՀ-ում, 2023-2024թթ.

		2023թ	2024թ	Փոփոխությունը (+/-)	
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍ		65.1	64.9		-0.2
Օրենքի գերակայություն	Սեփականության իրավունքի պաշտպանություն	50.3	50.3		0
	Արդարադատության արդյունավետություն	31.5	31.6		0.1
	Կոռուպցիայի բացակայություն	51.6	50.0		-1.6
Պետական հատվածի կշիռ	Հարկային բեռ	87.5	87.6		0.1
	Պետական ծախսեր	76.3	75.5		-0.8
	Հարկաբյուջեի տարաձայնություն կայունություն	71.4	69.1		-2.3
Կարգավորումների արդյունավետություն	Գործարարության ազատություն	64.9	69.2		4.3
	Աշխատանքի ազատություն	58.7	58.9		0.2
	Դրամավարկային ազատություն	70.5	67.5		-3
Շուկայի բացություն	Առևտրի ազատություն	73.6	73.6		0
	Ներդրումային ազատություն	75.0	75.0		0
	Ֆինանսական ազատություն	70.0	70.0		0

Հայաստանը 12 ենթահիմքերից միայն մեկի՝ «հարկային բեռի» գծով է համարվում է տնտեսապես «ազատ» երկիր, 4-ի գծով՝ «հիմնականում ազատ», 3-ի գծով՝ «չափավոր ազատ», 3-ի գծով՝ «հիմնականում ոչ ազատ», 1-ի գծով՝ «ճնշված»: Մեր երկրի երեք ենթահիմքերն են՝ «Սեփականության իրավունքի պաշտպանությունը», «Արդարադատության արդյունավետությունը» և

«Դրամավարկային ազատություն», ցածր են դրանց համաշխարհային միջին մակարդակից (համապատասխանաբար՝ 53.6, 48.9 և 67.6 միավորից):

Ենթաինդեքսների 4 խմբերից ամենաանբարենպաստը «Օրենքի գերակայություն» խմբի վիճակն է: Խմբի 3 ենթաինդեքսներից երկուսի գծով Հայաստանը համարվում է տնտեսապես **«հիմնականում ոչ ազատ»**, իսկ մեկի գծով՝ **«ճնշված»**: Զեկույցի՝ այս խմբի ենթաինդեքսներին նվիրված հատվածում մասնավորապես նշված է, որ «Հայաստանում օրենքի ընդհանուր գերակայությունը թույլ է»:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ այս խմբում ընդգրկված կոռուպցիայի բացակայության ենթաինդեքսը նվազել է 1.6 միավորով և հասել է տնտեսապես **«հիմնականում ոչ ազատ»** երկրների խմբի նվազագույն շեմին՝ 50 միավորին:

«Դրամավարկային ազատություն» ենթաինդեքսի՝ նախորդ տարվա համեմատ 3.0 միավորի անկման պատճառով Հայաստանը կորցրել է իր տեղն այս ենթաինդեքսի գծով **«հիմնականում ազատ»** երկրների խմբում և դասակարգվել որպես **«չափավոր ազատ»** երկիր: Ամենայն հավանականությամբ հիմնական պատճառներն են 2022 թվականի գնաճի բարձր տեմպը (ինչպես նշվել է՝ ինդեքսի հաշվարկման մեթոդաբանությունը մանրամասնելիս, ենթաինդեքսը հաշվելու համար վերցվում է վերջին երեք տարիների գնաճի տեմպերի կշռված միջինը) և ՀՀ կենտրոնական բանկի՝ բարձր գնաճով պայմանավորված ագրեսիվ զսպող քաղաքականությունը: Ի դեպ, այս ենթաինդեքսի գծով նախորդ տարում ևս անկում է գրանցվել՝ 7.0 միավորով: **«Հիմնականում ազատ»** երկրների խմբից **«չափավոր ազատ»** երկրների խումբ անցանկալի տեղաշարժ է արձանագրվել նաև «Հարկաբյուջետային կայունություն» ենթաինդեքսի գծով, որի 2024թ. արժեքը՝ 69.1, 2.3 միավորով պակաս է 2023-ի մեծությունից: Այս փաստը թերևս պայմանավորված է վերջին տարիներին պարտքի ավելացմամբ, որը ենթակառուցվածքների զարգացմանն ուղղելու փոխարեն մեծամասամբ հատկացվել է ընթացիկ ծախսերին: Ի դեպ, այս ենթաինդեքսի գծով անկում է գրանցվում երրորդ տարին անընդմեջ՝ 2022-ին այն նվազել էր 8.8, իսկ 2023-ին՝ 4.1 միավորով:

Նախորդ տարվա համեմատ 0.8 միավորով նվազել է նաև «Պետական ծախսեր» ենթաինդեքսը: Ինչպես արդեն նշվել է, այս ենթաինդեքսը հանդիսանում է «պետական ծախսեր/ՀՆԱ» ցուցանիշի վերջին երեք տարիների արժեքների միջին մեծության ոչ գծային ստանդարտացման արդյունք:

4. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ

Ուսումնասիրության այս բաժինը նվիրված է ՏԱԻ-ի և վարկանիշային աղյուսակներում դիրքի առնչությամբ Հայաստանին խմբակից (տարբեր դասակարգումներով) երկրների հետ համեմատական վերլուծությանը:

Աղյուսակ 2-ից երևում է, որ **2024 թվականին Հայաստանը ՏԱԻ-ով Եվրոպայի տարածաշրջանում 26-րդն է:** Այս տարի ևս, չնայած ՏԱԻ-ի նվազմանը, Հայաստանի դիրքը եվրոպական տարածաշրջանում նախորդ տարվա համեմատ բարելավվել է՝ այս անգամ 2 հորիզոնականով (նախորդ տարի նույնպես մեր երկրի ՏԱԻ-ն 0.2 միավորով նվազել էր, սակայն վարկանիշային աղյուսակում դիրքը բարելավվել էր 6 հորիզոնականով): Պատճառը դարձյալ նույնն է՝ նախորդ տարվա տարածաշրջանային վարկանիշային աղյուսակում Հայաստանից ավելի բարձր դիրքում գտնվող որոշ երկրներում 2024թ. ՏԱԻ-ի նվազումն ավելի մեծ է եղել: Բացի Հայաստանից, եվրոպական տարածաշրջանի ևս 16 երկրների դիրքը վարկանիշային աղյուսակում բարելավվել է: Ի դեպ, դրանցից 10-ի դիրքը բարելավվել է, թեև ՏԱԻ-ին չի աճել (ինչպես Հայաստանի դեպքում):


Աղյուսակ 2. ՏԱԻ-ին Եվրոպայի երկրներում, 2023-2024թթ.

N	Երկիր	ՏԱԻ 2023	ՏԱԻ 2024	ՏԱԻ-ի փոփոխությունը (+/-)	Դիրք 2023	Դիրք 2024	Դիրքի բարելավում/վատթարացում (+/-)
1	Շվեյցարիա	83.8	83.0	↓ -0.8	1	1	→ 0
2	Իռլանդիա	82.0	82.6	↑ 0.6	2	2	→ 0
3	Լյուքսեմբուրգ	78.4	79.2	↑ 0.8	4	3	↑ 1
4	Դանիա	77.6	77.8	↑ 0.2	6	4	↑ 2
5	Էստոնիա	78.6	77.8	↓ -0.8	3	5	↓ -2
6	Շվեդիա	77.5	77.5	→ 0.0	7	6	↑ 1
7	Նորվեգիա	76.9	77.5	↑ 0.6	9	7	↑ 2
8	Նիդերլանդներ	78.0	77.3	↓ -0.7	5	8	↓ -3
9	Ֆինլանդիա	77.1	76.3	↓ -0.8	8	9	↓ -1
10	Լիտվա	72.2	72.9	↑ 0.7	14	10	↑ 4
11	Կիպրոս	72.3	72.3	→ 0.0	12	11	↑ 1
12	Գերմանիա	73.7	72.1	↓ -1.6	10	12	↓ -2
13	Լատվիա	72.8	71.5	↓ -1.3	11	13	↓ -2
14	Իսլանդիա	72.2	70.5	↓ -1.7	13	14	↓ -1
15	Չեխիա	71.9	70.2	↓ -1.7	15	15	→ 0
16	Պորտուգալիա	69.5	68.7	↓ -0.8	18	16	↑ 2
17	Մեծ Բրիտանիա	69.9	68.6	↓ -1.3	17	17	→ 0
18	Բուլղարիա	69.3	68.5	↓ -0.8	19	18	↑ 1
19	Վրաստան	68.7	68.4	↓ -0.3	21	19	↑ 2
20	Ավստրիա	71.1	68.4	↓ -2.7	16	20	↓ -4
21	Սլովակիա	69.0	68.1	↓ -0.9	20	21	↓ -1
22	Խորվաթիա	66.4	67.3	↑ 0.9	26	22	↑ 4
23	Լեհաստան	67.7	66.0	↓ -1.7	23	23	→ 0
24	Սլովենիա	68.5	65.9	↓ -2.6	22	24	↓ -2
25	Բելգիա	67.1	65.6	↓ -1.5	25	25	→ 0
26	Հայաստան	65.1	64.9	↓ -0.2	28	26	↑ 2
27	Ալբանիա	65.3	64.8	↓ -0.5	27	27	→ 0
28	Մալթա	67.5	64.5	↓ -3.0	24	28	↓ -4
29	Ռումինիա	64.5	64.4	↓ -0.1	30	29	↑ 1
30	Իսպանիա	65.0	63.3	↓ -1.7	29	30	↓ -1
31	Սերբիա	63.5	62.7	↓ -0.8	34	31	↑ 3
32	Ֆրանսիա	63.6	62.4	↓ -1.2	33	32	↑ 1
33	Բոսնիա և Հերցեգովինա	62.9	62.1	↓ -0.8	35	33	↑ 2
34	Ադրբեջան	61.4	61.6	↑ 0.2	37	34	↑ 3
35	Հյուսիսային Մակեդոնիա	63.7	61.4	↓ -2.3	32	35	↓ -3
36	Հունգարիա	64.1	61.3	↓ -2.8	31	36	↓ -5
37	Կոսովո	60.7	60.6	↓ -0.1	39	37	↑ 2
38	Իտալիա	62.3	60.1	↓ -2.2	36	38	↓ -2
39	Մոնտենեգրո	60.9	59.7	↓ -1.2	38	39	↓ -1
40	Մոլդովա	58.5	57.1	↓ -1.4	40	40	→ 0
41	Թուրքիա	56.9	56.2	↓ -0.7	41	41	→ 0
42	Հունաստան	56.9	55.1	↓ -1.8	42	42	→ 0
43	Ռուսաստանի Դաշնություն	53.8	52.0	↓ -1.8	43	43	→ 0
44	Բելառուս	51.0	48.4	↓ -2.6	44	44	→ 0

Եվրոպայի տարածաշրջանից 2 երկիր է տնտեսապես **«ազալ»**: Տարածաշրջանային վարկանիշային աղյուսակի առաջատար եռյակում են Շվեյցարիան, Իռլանդիան և Լյուքսեմբուրգը: Դանիան և Էստոնիան կիսում են 4-րդ հորիզոնականը: Տարածաշրջանի հետնապահներն են Թուրքիան, Հունաստանը, Ռուսաստանը և Բելառուսը:


Հայաստանը ՏԱԻ-ով 2024-ին ևս ԵԱՏՄ անդամ-երկրների թվում առաջատարն է (Գծապատկեր 5): Նկատենք, որ այս տարի ԵԱՏՄ անդամ բոլոր երկրների ՏԱԻ-ն նվազել է: Հայաստանից բացի, դիրքի բարելավում են ունեցել նաև Ղազախստանը և Ղրղզստանը (համապատասխանաբար՝ 5 և 3 հորիզոնականով): Բելառուսը **«հիմնականում ոչ ազալ»** երկրների խմբից հայտնվել է **«ճնշված»** երկրների խմբում: Մնացած երկրների խմբի փոփոխություն տեղի չի ունեցել:

Գծապատկեր 5. ԵԱՏՄ երկրների ՏԱԻ-ն և վարկանիշային աղյուսակում դիրքը, 2022-2024թթ.



Գծապատկեր 6-ից երևում է, որ **Հայաստանը հարևան երկրներից շարունակում է զիջել միայն 68.4 միավոր ՏԱԻ ունեցող և համաշխարհային վարկանիշային աղյուսակի 32-րդ հորիզոնականը զբաղեցնող Վրաստանին**: Հարևան երկրներից Հայաստանին հաջորդում է Ադրբեջանը (61.6 ՏԱԻ-ով)՝ համաշխարհային վարկանիշային աղյուսակում զբաղեցնելով 70-րդ հորիզոնականը: Չորրորդը Թուրքիան է՝ 56.2 միավորով (համաշխարհային վարկանիշային աղյուսակում՝ 102-րդ հորիզոնական): Հարևան երկրների թվում վերջինը Իրանն է՝ 41.2 միավորով (համաշխարհային վարկանիշային աղյուսակում՝ 169-րդը):

Գծապատկեր 6. ՀՀ-ի և հարևան երկրների SUI-ն և վարկանիշային աղյուսակում դիրքը, 2022-2024թթ.



Աղյուսակ 3-ից երևում է, որ Հայաստանի հարևան երկրներից նախորդ տարվա համեմատ SUI-ի արժեքի փոփոխության առումով վատագույն արդյունքը գրանցել է Իրանը (ինդեքսը նվազել է 1.0 միավորով): Միջազգային վարկանիշային աղյուսակում զբաղեցրած դիրքի նահանջ երկրներից ոչ մեկը չի ունեցել: Ամենամեծ առաջընթացն ունեցել է Ադրբեջանը: Նրա SUI-ն աճել է 0.2 միավորով, իսկ համաշխարհային վարկանիշային աղյուսակում զբաղեցրած դիրքը բարելավվել է 5 հորիզոնականով: Բացի Իրանից, մնացած բոլոր երկրների դիրքը բարելավվել է, թեև միայն Ադրբեջանի SUI-ն է աճել:

Աղյուսակ 3. SUI-ի արժեքների և հորիզոնականների փոփոխությունը ՀՀ-ում և հարևան երկրներում, 2022-2024թթ.

Երկիր	SUI					Դիրքը վարկանիշային աղյուսակում				
	Մեծությունը			Փոփոխություն +/-		Մեծությունը			Փոփոխություն +/-	
	2022	2023	2024	2022-2023	2023-2024	2022	2023	2024	2022-2023	2023-2024
Հայաստան	65.3	65.1	64.9	-0.2	-0.2	58	50	47	-8	-3
Վրաստան	71.8	68.7	68.4	-3.1	-0.3	26	35	32	9	-3
Թուրքիա	56.9	56.9	56.2	0.0	-0.7	107	104	102	-3	-2
Ադրբեջան	61.6	61.4	61.6	-0.2	0.2	75	75	70	0	-5
Իրան	42.4	42.2	41.2	-0.2	-1.0	170	169	169	-1	0

Մեր տարածաշրջանի երկրներից բացի Հայաստանից «չափավոր ազատ» տնտեսություններով երկրների խմբում են ընդգրկված Վրաստանը և Ադրբեջանը: Թուրքիան դասակարգվում է որպես տնտեսապես «հիմնականում ոչ ազատ», իսկ Իրանը՝ «ճնշված» երկիր:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով «Տնտեսական ազատության ինդեքս - 2024» զեկույցի վերաբերյալ ուսումնասիրությունը՝ արձանագրենք.

- Հայաստանի 2024 թվականի տնտեսական ազատության ինդեքսը դարձյալ նվազել է և կազմել 64.9 միավոր, որը նախորդ տարվա ցուցանիշից պակաս է 0.2 միավորով: Համաշխարհային վարկանիշային աղյուսակում Հայաստանը զբաղեցնում է 47-րդ հորիզոնականը, իսկ եվրոպական տարածաշրջանում 26-րդն է: Հայաստանի 2024թ. ՏԱԻ-ն 2001 թվականից ի վեր նվազագույնն է:
- Վերջին երեք տարիներին Հայաստանն ընդգրկված է տնտեսապես «չափավոր ազատ» երկրների խմբում: Հիշեցնենք, որ 2020 և 2021 թվականներին Հայաստանն ավելի բարձր՝ տնտեսապես «հիմնականում ազատ», երկրների խմբում էր:
- Այս տարվա զեկույցում նույնպես նշված է, որ «Հայաստանում տնտեսական ազատության հիմքերը ամուր չեն պահպանվում դատական համակարգի կողմից, իսկ կոռուպցիան նվազեցնում է տնտեսական զարգացման հնարավորությունները»:
- Ամենամաքաբարենպաստը «Օրենքի գերակայություն» խմբի վիճակն է: Խմբի 3 ենթաինդեքսներից երկուսի գծով Հայաստանը համարվում է տնտեսապես «հիմնականում ոչ ազատ», իսկ մեկի գծով՝ «ճնշված»: Այս խմբում է ընդգրկված նաև «Կոռուպցիայի բացակայություն» ենթաինդեքսը, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 1.6 միավորով և հասել է տնտեսապես «հիմնականում ոչ ազատ» երկրների խմբի նվազագույն շեմին: Ջեկույցում խմբին նվիրված հատվածում նշված է, որ «Հայաստանում օրենքի ընդհանուր գերակայությունը թույլ է»:
- Նախորդ տարվա համեմատ «Դրամավարկային ազատություն» ենթաինդեքսի 3.0 միավորով անկման պատճառով Հայաստանը այս ենթաինդեքսի գծով «հիմնականում ազատ» երկրների խմբից տեղափոխվել է «չափավոր ազատ» երկրների խումբ՝ հիմնականում պայմանավորված բարձր գնաճի պատճառով ՀՀ կենտրոնական բանկի ագրեսիվ զսպող քաղաքականությամբ: Ի դեպ, «Դրամավարկային ազատություն» ենթաինդեքսի գծով նախորդ տարում ևս անկում է գրանցվել՝ 7.0 միավորով:
- Հայաստանը «հիմնականում ազատ» երկրների խմբից «չափավոր ազատ» երկրների խումբ է տեղափոխվել նաև «Հարկաբյուջետային կայունություն» ենթաինդեքսի գծով, քանի որ դրա մեծությունը նվազել է 2.3 միավորով: Այս փաստը թերևս պայմանավորված է վերջին տարիներին պարտքի ավելացմամբ, որը ենթակառուցվածքների զարգացմանն

ուղղելու փոխարեն մեծամասամբ հատկացվել է ընթացիկ ծախսերին: Ի դեպ, այս ենթահինդեքսի գծով անկում է գրանցվում արդեն երրորդ տարին անընդմեջ:

- Հայաստանը 12 ենթահինդեքսներից միայն մեկի՝ «Հարկային բեռ» ենթահինդեքսի գծով է համարվում տնտեսապես «ազատ» երկիր, իսկ «Արդարադատության արդյունավետության» գծով դասվում է տնտեսապես «ճնշված» երկրների շարքին:
- Հայաստանի երեք ենթահինդեքսներ՝ «Սեփականության իրավունքի պաշտպանությունը», «Արդարադատության արդյունավետությունը» և «Դրամավարկային ազատությունը», ցածր են դրանց համաշխարհային միջին մակարդակից:
- Համաշխարհային միջին ՏԱԻ-ին 58.6 միավոր է, որը նախորդ տարվա ցուցանիշից պակաս է 0.7 միավորով:
- ՏԱԻ-ի հիման վրա կազմվող համաշխարհային վարկանիշային աղյուսակի առաջատար լավագույն եղյակում են Սինգապուրը, Շվեյցարիան և Իռլանդիան: Վարկանիշային աղյուսակի հետնապահ ստորին եղյակում են Վենեսուելան, Կուբան և Հյուսիսային Կորեան:
- Հայաստանն ավանդաբար ԵԱՏՄ անդամ երկրների թվում ՏԱԻ-ով առաջատարն է:
- Հարևան չորս երկրներից Հայաստանը շարունակում է զիջել միայն Վրաստանին:

«**ԼՈՒՅՍ հիմնադրամ**» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «**ԼՈՒՅՍ**» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «**ԼՈՒՅՍ հիմնադրամ**» գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: